



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

02/04/2020

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:
Բացակա էին՝ Նեկտար Հովհաննիսյանը, Վալոդյա Սմբատյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը
Լսեցին

02.04.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել 02.04.2020 թվականի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը.
1) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով., հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 16-03-2020 թվականի թիվ 298-Ն և Հայաստանի Հանրապետության պարետի 31-03-2020 թվականի թիվ 27 որոշումները՝

1. Համայնքում սանիտարահամաճարակային կանոնների պահպանման, դրանց խախտման դեպքում հնարավոր վտանգների կանխարգելման աշխատանքների կազմակերպման ֆինանսավորման համար տալ համաձայնություն համայնքային բյուջեի բաժին 11 խումբ 1 դաս 2 ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ ոլորտի վարչական մասի պահուստային միջոցներ հոդվածից /հոդված 4891/ 208000 ՀՀ դրամ պակասեցնել՝ ավելացնելով այդ թվում

- 80000 ՀՀ դրամ բաժին 5 խումբ 1 դաս 1 շրջակա միջավայրի պահպանում ոլորտի ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հոդվածին /հոդված 4637/ համայնքում հակահամաճարակային միջոցառումների իրականացման ֆինանսավորման համար:
- 128000 ՀՀ դրամ բաժին 1 խումբ 1 դաս 1 օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում ոլորտի առողջապահական և լաբորատոր նյութեր հոդվածին /հոդված 4266/ համայնքապետարանի կարիքների համար առողջապահական նյութերի ձեռքբերման համար:

2. Աշխատանքներն իրականացնել, եղեգնաձորի համայնքային տնտեսություն, ՀՈԱԿ-ի միջոցով:

3. Աշխատանքների հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Ավագյանի վրա:

4"Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ն/

Ավագանու անդամներ

ԱՐՏԱԿ ԱԼՈՅԱՆ

ԱՐՏԱՇ ԱՅՎԱԶՅԱՆ

ՌՈՔԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԱՌՆԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՍԱՔԱՆՅԱՆ

ՍՄԲԱՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստին արձանագրեց՝ Անժելա Սարգսյան